## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

# ՈՐՈՇՈՒՄ N 33-Ն

29 մայիսի 2018 թվական

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԲՈՍԱՅԳԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, $48^{1}$-րդ հոդվածի, 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Գուսանագյուղ բնակավայրի սեփականությունը հանդիսացող սույն որոշման հավելվածում նշված հողամասերը համայնքային նշանակության այգի կառուցապատելու նպատակով մրցույթով տրամադրել վարձակալությամբ:

2. Հաստատել կառուցապատման նպատակով վարձակալությամբ իրավունքով օգտագործման տրամադրվող հողամասերի մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Նաիրի Ալավերդյան

Արմեն Նիկոյան

Կամսար Հովսեփյան

Արսեն Արսենյան

Արմենակ Նաջարյան

Գևորգ Շաբոյան

Արթուր Ուռումյան

Վահրամ Սահակյան

Զավեն Սարգսյան

Արսեն Վարոսյան

Գևորգ Ղզրոյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի

Անի համայնքի ղեկավար Արտակ Գևորգյան

ք. Մարալիկ

29 մայիսի 2018 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 29–Ի ԹԻՎ 33–Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՋՐՈՍԱՅԳԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՍԱՆԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը (հասցեն) | Հողամասի կադաստրային ծածկագիրը, իրավունքների պետական գրանցման վկայականի համարը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի մակերեսը (հեկտար) | Օգտագործման տրամադրման նպատակը | Հաղորդակցուղիների առկայությունը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Մրցույթի ձևը | Վարձակալության ժամկետը (տարի) | Մրցույթի մասնակցության նախավճարի չափը (դրամ) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Անի համայնք, բնակավայր Գուսանագյուղ 1-ին փողոց, 6/1 հողամաս | 08-036-0033-0001 N 25042018-08-0006 | Բնակավայրերի | Ընդհանուր օգտագործման | 0.07726 | Ջրոսայգու կառուցապատում | Ապահովված է ճանապարհով | Չկան | բաց | 25 | Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5% | 5000 |
| 2. | Անի համայնք, բնակավայր Գուսանագյուղ 2-րդ փողոց, 2/1 հողամաս | 08-036-0033-0013 N 24082017-08-0032 | Հատուկ պահպանվող տարածքների | Պատմական և մշակութային | 1.60394 | Ջրոսայգու կառուցապատում | Ապահովված է ճանապարհով | Չկան | բաց | 25 | Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5% | 8000 |
| 1. | Անի համայնք, բնակավայր Գուսանագյուղ 14-րդ փողոց, 14/1 հողամաս | 08-036-0033-0018 N 30082017-08-0013 | Բնակավայրերի | Ընդհանուր օգտագործման | 1.73597 | Ջրոսայգու կառուցապատում | Ապահովված է ճանապարհով | Չկան | բաց | 25 | Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5% | 9000 |

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ղեկավար՝ Արտակ Գևորգյան